ԳՐԱՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ TEFAP-Ի ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը՝ _____

Քանի որ այս ծրագիրն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում է Դաշնային կառավարության ֆինանսական աջակցությամբ, մենք պարտավոր ենք Ձեզ տեղեկացնել, որ՝

(1) Մենք չենք կարող խտրականություն դրսևորել Ձեր նկատմամբ՝ կրոնի, կրոնական համոզմունքի, կրոնական համոզմունքներից հրաժարվելու կամ կրոնական ծիսակատարություններին մասնակցելուց հրաժարվելու հիման վրա:

(2) Մենք չենք կարող պահանջել, որ Դուք մասնակցեք մեր կազմակերպության կողմից առաջարկվող որևէ բացահայտ կրոնական գործունեության (ներառյալ՝ այն գործողությունները, որոնք ներառում են ակնհայտ կրոնական բովանդակություն, ինչպիսիք են՝ պաշտամունքը, կրոնական ուսուցումը կամ քարոզչությունը), և Ձեր մասնակցությունը նման գործունեությանը պետք է լինի բացառապես կամավոր:

(3) Մենք պետք է ժամանակի կամ վայրի առումով առանձնացնենք մասնավոր կերպով ֆինանսավորվող ցանկացած բացահայտ կրոնական գործունեություն (ներառյալ այն գործողությունները, որոնք ներառում են ակնհայտ կրոնական բովանդակություն, ինչպիսիք են՝ պաշտամունքը, կրոնական ուսուցումը կամ քարոզչությունը) ուղղակի Դաշնային ֆինանսական աջակցությամբ ֆինանսավորվող գործունեությունից, ինչպես նաև՝

(4) Դուք կարող եք հաղորդել այս պաշտպանության խախտումների, այդ թվում՝ կազմակերպության կողմից ծառայությունների կամ նպաստների մերժման մասին՝ կապվելով կամ գրավոր բողոք ներկայացնելով Քաղաքացիական իրավունքների օգնական քարտուղարի գրասենյակ, Քաղաքացիական իրավունքների պաշտպանության կենտրոն, Ծրագրային բողոքների բաժին՝ փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով հետևյալ հասցեով՝

Փոստ.
United States Department of Agriculture
Director, Center for Civil Rights Enforcement
1400 Independence Avenue, SW
Washington, DC 20250-9410

Ֆաքս. (202) 690-7442
Էլ. Փոստ. program.intake@usda.gov

(5) Եթե ցանկանում եք տեղեկություններ ստանալ այն մասին, թե արդյոք Ձեր տարածքում կան այլ դաշնային ֆինանսավորմամբ կազմակերպություններ, որոնք մատուցում են նմանատիպ ծառայություններ, խնդրում ենք կապվել **ԱՄՆ Գյուղդեպարտամենտի Սննդային օգնությանթեժ գծի հետ**.

- Հեռախոսով՝ 1-866-3-HUNGRY կամ 1-877-8-HAMBRE՝ ներկայացուցչի հետ խոսելու համար Արևելյան ժամանակով առավոտյան ժամը 7:00-ից մինչև երեկոյան 10:00-ը:
- Հաղորդագրությունով՝ 914-342-7744 համարով, հարցով, որը կարող է պարունակել բանալի բառեր, ինչպիսիք են՝ «սնունդ», «ամառ», «կերակուրներ» և այլն, որպեսզի ստանաք ավտոմատ պատասխան հասցեի և/կամ փոստային ինդեքսի մոտ գտնվող ռեսուրսներին:

Այս գրավոր ծանուցումը պետք է Ձեզ տրամադրվի նախքան ծրագրում գրանցվելը կամ ծրագրից ծառայություններ ստանալը, եթե մատուցվող ծառայության բնույթը կամ արտակարգ հանգամանքները անհնար չեն դարձնում նման ծանուցում տրամադրելը նախքան մեր կողմից իրական ծառայության մատուցումը: Այդ դեպքում այս ծանուցումը պետք է Ձեզ տրամադրվի հնարավորինս շուտ: